

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Թիֆլիս. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄԵՐ Կ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով.

Յայտարարութիւններ համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1895 ГОДЪ

НА ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

(двѣнадцатый годъ изданія)

Въ 1895 г. «Новое Обозрѣніе» будетъ выходить въ Тифлисѣ, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ газеты литературной, общественной и политической.

Условія подписки: съ пересылкою и доставкою: на годъ—10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяць—1 р. 50 к. За границу: на годъ—17 р., на полгода—9 р., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе, какъ считая съ перваго числа любого мѣсяца).

Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, допускается разсрочка, на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р.

Подписка и объявленія принимаются въ Тифлисѣ: въ конторѣ газеты, Барятинская ул., № 8. Иногородные адресуютъ свои требованія: Въ Тифлисѣ, въ редакцію «Новаго Обозрѣнія».

Лица, подписавшіяся (безъ разсрочки) на годовое изданіе «Новаго Обозрѣнія» 1895 г. въ настоящее время, будутъ безплатно получать газету въ текущемъ году со дня подписки.

1—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագիրներ թիւրքաց հայերի մասին. Մամուլի կարծիքը թիւրքաց հայերի հարցի մասին.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց հարցը և պետութիւններ. Գարաշիշազի առողջական վիճակը. Նամակ Գորիսից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—ՀԱՅԱՍՏԱՆԻՆԵՐ.—ԲՈՐՈՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գաղթականներ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՎԻԲԱՅ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հեռագրով)

Մեր թղթակիցը Պետերբուրգից հեռագրում է մեզ դեկտեմբերի 12-ից.

«Լոնդոնից» «Новое Время» լրագրին հեռագրում են, որ Լոնդոնում ապրող մահճատականները բողոքում են, Հայաստանի ապստամբութիւնը ձեռնու առիթով մահճատական կրօնի և օրէնքի վերաբերմամբ արված սուտ մեղադրանքների դէմ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ

III

Մասուրի թիֆլիսեցի պատած մի շրջանի մէջ տեղում, արմատախիլ փշերի դէզով կազմել էին մի մեծ խարոյկ և նրա շուրջը թափվել, ընկել էին գաղթականները:

Մօտ երեսուն հոգի էին՝ կին, աղջիկ և մանուկներ: Բոլորը խղճալի, պատառոտուն հագուստներով, գրեթէ ոտաբոլիկ և զլխաբաց: Տղամարդկանց վրա բաձկոնները կտրուված, բացված ամեն կողմից, ցեխոտ ու փոշոտ:

Կանանց հագուստն էր միակ երկար պարեգաւոր, որ իր ծակոտներով ցնցոտի էր եղել և ցրտի առջև էր հանում մեղմ անդամներ: Ել ձեռք չէր մնացել առանց կապտելու, կարկամալու: Փչում էին նրանք իրանց ձեռքերի մէջ, ոտները վեր ու վար անում ձիւնի մէջ կանգնած, չփում ականջները... քթերից ծորում էր, աչքերից հոսում...

Հաւաքվել, ընկել էին խարոյկի շուրջը: Ոմանք փռվել մէջքը կրակին էին տուել: Քույր ընկնել էր կանանց և մանուկներին: Որդիք իրանց ծնողների գրկի մէջ կուշ եկել և այդպէս կոտ կոյտ, միմեանց գալարված՝ պարզվել էին ցեխի և ջրի մէջ, որ գոյացել էր կրակից հալվող ձիւնից:

Լսվում էին երբեմն խուլ, խոր հառաչներ ու գանգատներ.

—Օ՛, ինչ ցուրտ է, ինչ ցուրտ:

—Քաղցած եմ, մայրիկ...

—Եւման Աստուած, գոչում էր մի կին—հոգիս առ պրծիր... Որդին էր, որ տանջւում էր նրան,

«Թիւրքիայի պանիսլամական ընկերութիւնը միտինգներ է գումարում: Երոնց կողմից պատգամաւորութիւն կը ներկայանայ Կիւմբուլիին, խնդրելով նրա միջամտութիւնը՝ պաշտպանելու մահճատականներին»:

Մեր թղթակիցը դեկտեմբերի 14-ից հեռագրում է մեզ Պետերբուրգից. «Daily News» ասում է, որ Բ. Գուլը, իր յամառութեան պատճառով այլ ևս իրաւունք չունի վայելելու անգլիացիների հովանաւորութիւնը և նա կորցրեց այդ իրաւունքը: Այդ պաշտպանութիւնը պայմանաւորվում է Կիպրոսի դաշնագրով, բայց այժմ ոչինչ բան չէ սահմանափակում Ռուսաստանի դործունէութեան ազատութիւնը: Հայաստանը ռուսների սեփականութիւն կը դառնայ, եթէ Թիւրքիան ինքնավար նահանգ չը դարձնէ Հայաստանը, քրիստոնեայ նահանգապետով»:

Կրկնապատկում նրա վիշտը. այդ փորրկի արածի ձայնը կտրվել էր, բայց նա բերանը մօր ունին կպցրած, կոկորդից խուլ, խուլոտ աղաղակներ էր արձակում, որ ով գիտէ, գուցէ նրա վերջին շունչն էր...

—Տէր Աստուած, մոմուտ էր մի տղամարդ, մեր մեղքն ինչ էր, որ այս օրին ես հասցնում մեզ...

Կրկնի շուրջը նստած հինգ վեց տղամարդիկ չէին քնել. կուշ էին եկել և պղպղ. առականներ էին վազում նրանց տակից, ցուրտը սառնեցնում էր նրանց մէջքը:

Չէին քնել, աշխատում էին արթուն մնալ: Ներանցից մէկը, մի ծերունի, ցուպը գոգին և զլխով ծնկներին կռթնեցրած՝ խօսում էր յոգնած ձայնով: Լսում էին, բայց ոչ ոք տալով. խօսում էր ծերունին, բայց իրան ակամայ, որքան ուժասպառ:

Պատմող ծերունին յիսնամայ, կորսածակ ու կարճահասակ անձ էր. կենքը զգալի կերպով քաղցրվում էր նրա մէջ. վշտեր, միայն վշտեր էին, որ արտայայտում էր նրա հայեացքը, դէմքը. այդ ճանապարհորդութիւնը ոյժ չէր թողել նրա մէջ:

Բայց նա պատմիչ էր և պատմում էր, որպէս զի չը թողնի ընկու իր հայրենակիցներին, խմբի պահապաններին: Պատմել էր նա իր կենքի ամբողջ ընթացքը, զբաղեցրել եղբայրներին, մոռացնել տուել շատ վշտեր... Այժմ էլ նոյնն էր անում. փակվում էին նրա աչքերը, բայց նա խօսում էր. լեզուն ուզում էր դադարել, սառում էր նրա մէջ ամեն ինչ, բայց նա դեռ պատմում էր...

...Փառաւորը ողորմեց նրան, ասաց՝ շնորհ, աչքիցս հեռացիր. ձակապիս այսպէս էր գրված,

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԴԻՔԸ ԹԻՎԻԲԱՅ ՀԱՅԵՐԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Մեր արդէն հաղորդեցինք, որ անգլիական «Westminster Gazette» լրագրում տիկին Նովիկովայի մէջ յօդուած տպեց հայկական հարցի առիթով, որի մէջ ամբողջ մեղքը դրում էր Անգլիայի վրա: Այժմ «Morning Post» լրագրը, պատասխանելով տիկին Նովիկովային, ասում է, որ Սան-Սեբաստիո դաշնագրին վերադառնալը դեռ ևս բաւարար երաշխաւորութիւն չէր լինի Թիւրքիայի հայ հպատակների ապահովութեան համար: Անհրաժեշտ է որոշել, որ Հայաստանի մասին ընթերցանքը վերաբերում են Թիւրքիայի այն բոլոր նահանգներին, ուր ապրում են հայերը:

Անգլիական «Observer» լրագրը յայտարարում է: որ ներկայ պայմաններում այդ անհնարին դրութիւնից դուրս գալու միակ ելքն այն է, եթէ Ռուսաստանը կը հաստատի իր հովանաւորութիւնը Հայաստանի վրա, կամ Հայաստանը կը միացնի Ռուսաստանի հետ:

Լոնդոնից «Новое Время» լրագրին հեռագրում են դեկտեմբերի 5-ից. «Ներքին անգլո-հայկական ընկերութեան մասնաժողովը քննում էր այն յայտարարութիւնը, որով դիմեց մասնաժողովին լորդ Բոգլէրի, խնդրելով, որ մասնաժողովը հաղորդի լորդ Կիմբըրլէյին այն վճիռները, որ կը կայանան տեղի ունենալի միտինգում: Հասարակութիւնը՝ չափազանց զարմացած է այն նշանակութիւնից, որին հասել է հայկական մասնաժողովը և այն հովանաւորութիւնից, որ ցոյց է տալիս նրան կառավարութիւնը»:

Անգլիական «Times» լրագրի Պետերբուրգի թղթակցի խօսքերով, ռուսաց մամուլը շատ սառն է վերաբերվում Հայաստանի վերաբերմամբ Անգլիայի սկսած աղի-

տացիային և այդ բանը վերադրում է այն հանգամանքին, որ ռուսաց մամուլը կասկածով է վերաբերվում Անգլիային:

Լոնդոնի «Times» լրագրը հայոց դործերի առիթով ասում է. «Կ. Պոլսից տեղեկութիւն է ստացված, որից երևում է, թէ պետութիւնների մէջ տեղի ունեցած հայեացքների փոխանակութեան պատճառով, Բ. Գուլը համաձայնեց, որ բրիտանական, ֆրանսիական և ռուսաց հիւպատոսները մասնակցեն այն քննիչ յանձնաժողովում, որ նշանակված է Սասունի դաշնութիւնները քննելու համար: Լորդ Կիմբըրլէյ, ներկայ դէպքում, մեծ տակաւով և զգուշութեամբ էր դործում Մեքէ անկեղծ կերպով շնորհաւորում ենք նրան այն աշողութեան համար, որին նա հասաւ, և խորին կերպով հաւատում ենք, որ ներկայ դէպքում այնպիսի մի բան չի պատահի, որ կարող լինէր խախտել պետութիւնների համաձայնութիւնը և խանգարէր դործի բարեխղճ քննութիւնը»:

Լոնդոնի «Standard» լրագրը հաղորդում է իր թղթակցի տեսակցութիւնը մեծ վիզիրի հետ Կ. Պոլսում. «Մեծ վիզիրի կարծիքով այն տաք վիճաբանութիւնը, որ տեղի ունի մամուլի մէջ հայոց հարցի առիթով, արտասահմանի հայոց մասնաժողովների խորհրդների հետեանք է միայն: Ոչ մի կերպով չէ կարելի թոյլ տալ, որ Թիւրքաց զօրքերը իսկապէս կատարէին այն կոտորածները, որ վերագրում են ներքին: Յանձնաժողովը, որին մասնակցելու համար հրաւիրվեցին օտար պետութիւնները, կը կատարի իր պարտքը ամենաանկողնապաշ կերպով և ի հարկէ, եթէ կը յայտնվի, որ Թիւրք պաշտօնեաներից մէկը զոնէ արժանի է նախատիքի ներկայ դէպքում, այն ժամանակ հէնց իրան Բ. Գուլը շահը պահանջում է, որ այդպիսի մի պաշտօնեայ իր արժանի պատիճը կրի: Մեծ վիզիրը մի և նոյն ժամանակ ցանկութիւն

որ ըստ երեւոյթին խմբապետն էր, առանց չարժ-վելու տեղից նայեց եկողին և ասաց տխրութեամբ.

—Քիւրդ է... Է՛, թողէ տղերք, չէ որ ոչինչ չունենք:

Զետոյ Պետոյն դարձաւ և ասաց քիւրդերէն:

—Ոչինչ չը մնաց... ձերոնք վաղուց առին եղածները:

Ներկատարողը մի քանի քայլ էլ առաջացաւ, գրեց գետնին հրացանի կոթը և ասաց մեղմ ձայնով.

—Մի վախենաք, ես հայ եմ, ճանապարհորդ... Գուր որ կողմերից էք:

—Մշոյ երկրից, պատասխանեց խմբապետը,— Գրոնցից:

—Գրոնցից... Գրոնցից չը կան ձեր մէջ:

—Գրոնցից... մոմուտ խմբապետը, նրանք անցան. մեր մէջ չը կան:

Պետոն խոնարհեցրեց գլուխը. ծնկները կլնոտեցին և նա համարեա թէ ընկաւ. հրացանը շառաչիւնով գետին իջաւ:

—Ախ, ասաց նա խորին տխրութեան շնչով—օրերով քայլի, յոյսով հասիր այստեղ և... չը կայ:

Ու գլուխը ձեռքերի մէջն առաւ:

Բոլորը յուզվեցին. կանաչը, որոնք զարթնել էին, մօտ եկան. նրանցից մէկը ետ քաշվեց և մեղմ ու յուզված ձայնով ասաց.

—Խեղճ... նշանակին է փնտռում:

Պետոն ցնցվեց և բարձրացրեց գլուխը:

—Ո՛վ էր նշանած ասողը, հարցրեց նա Գուլէր, մայրիկ...

այն, նշանած եմ փնտռում...

գնաց ցրտի մէջ, հալածված, կիսամերկ. ապրում է նա... Այ՛, նշանած եմ փնտռում... որ է,

տեսել ես նրան:

յայտնեց, որ մամուլը քննադատութիւնից հետո մնայ մինչև քննութեան աւարտը:

Գերմանական «Vossische Zeitung» լրագրին Կ. Պոլսից հաղորդում են, որ Բ. Դրան մէջ մեծ իրարանցում է տիրում հայոց հարցում Անգլիայի բռնած զիջքի պատճառով: Կարծում են, որ այժմեան մեծ վիզիրը ստիպված կը լինի հրաժարական տալ և նրա տեղ կը նշանակվի կամ Գեա-միլ-փաշան կամ Շաքիր-փաշան:

Անգլիական «Daily Chronicle» լրագրին Կ. Պոլսից ստացած իր տեղեկութիւն-ների հիման վրա պնդում է, որ քննիչ յանձնաժողովը ուղարկվում է Երզնկայ, ուր գտնվում է հետևակ զորքաբանի զը-խաւոր բանակը, Սասունի կոտորածի հե-ղինակ Զիքքի-փաշայի հրամանատարու-թեան տակ: Ինչ տեսակ էլ լինի քննիչ յանձնաժողովի գործունէութեան եղանակը, այնու ամենայնիս, լրագրի կարծիքով, օչինչ հետևանքներ չէ կարելի սպասել մի քանի ամիսից առաջ, մանաւանդ որ ամեն տեսակ քննութիւն կը դժուարանայ տարվայ այդ ժամանակում, հաղորդակցութեան ծանա-պարհների վատ դրութեան պատճառով: Ասում են, որ քննիչ յանձնաժողովը ամե-նից առաջ ցանկանում է քննել ոչ թէ հայերի կոտորածի դործը, այլ բերդերի աւազակային բաշտործութիւնները:

«Բէյութի» գործակալութիւնը հա-ղորդում է, որ Ալեքսանդր Կարապետ-անցի իր մասին, որոնց ենթարկվել են ի-րանց հայրենակիցները Թիւրքիայում վա-նի նահանգապետը, բերդ Բաքրի-փաշան զրաւեց մի քանի զիւղեր Երզնկայի շրջա-նում և նրա զորքերը բռնութիւններ գործ-դրեցին այդ զիւղերի բնակիչներին վրա: 126 հայեր բռնադատված են:

Անգլիական մամուլը չափազանց հե-տադրեցված է հայոց հարցով: «Daily Chro-» լրագրից տպագրեց մի յօդուած «Նոր երեքշաբաթեան դաշնակցութիւն» վերնագրով, որը մի առանձին տպագրութիւն լինողից: Այդ յօդուածում լրագրիչը առանձնապէս շեշ-տում է այն համաձայնութիւնը, որ երե-ւում է Ռուսաստանի Անգլիայի և Ֆրան-սիայի մէջ մի կողմից, և Բ. Դրան մէջ միւս կողմից, հայկական հարցի վերաբը-մամբ: «Եթէ ուրիշ պետութիւնները ի-րանց հետ ևս պահում են աւելցնում է լրագրիչը, այդ այն պատճառով է, որ նը-րանք հիմնաւոր պատճառներ ունեն թը-նամական աչքով նայելու այն ընթացքի վրա, որ ընդունում են անգլո-ֆրանս-ռու-սական յարաբերութիւնները, նախատես-

լով մի քանի անխուսափելի հետևանքներ գործերի այդպիսի ընթացքից»:

«Le Nord» լրագրին ասում է, «Լոնդոնի լրագրիչների տարածած այն տեղեկութիւ-նը, որ իրր թէ Կ. Պոլսի ռուսաց դեսպանը հայոց գործերի առիթով յայտագիր է ներ-կայացրել Բ. Դրանը, որ և է հիմքից զուրկ է»:

Գերմանական «Hamburg. Correspon-» dent» լրագրից հայոց հարցի առիթով ասում է, որ Գերմանիան հարկաւոր չէ համարում անմիջական կերպով միջամտել հայոց գործերում: Բերլինում համոզված են, որ թիւրքաց կառավարութիւնը ան-հրաժեշտ բոլոր միջոցները ձեռք կառնի՝ ճշմարտութիւնը երևան հանելու և զեղ-ծութիւնները վերացնելու համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՀԱՐՅՐ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Որքան մեղ յայտնի է, առիթներ կան չը կասկածելու, որ ճշմարտեման է Լոնդոնի «Բէյ-» տէրի գործակալութեան հաղորդած տեղեկու-թիւնը այն բանի մասին, որ 1879 թ. Բերլինի դաշնագրից ստորագրող պետութիւնների մէջ տեղի ունեցած հայեցանքների փոխանակութեան պատճառով, օսմանեան կառավարութիւնը հաժ-ձայնեց, որ Երզնկայի ռուսաց, անգլիական և ֆրանսիական հիւպատոսները մասնակցեն «Սա-սունի զէպքերի» առիթով կազմված քննիչ յան-ձնաժողովի մէջ:

«Սուլթանի կառավարութեան համար չը կար-դրանից աւելի լաւ կը այն դժուարութիւններից, որ աշխատում էր փաթկանք նրա վրին Լոնդոնի հայերի և հայրենակիցների աղմուկի ազդեցութիւն: Դեռ ամենից առաջ յայտարարելով, որ «Հայաս-տանում կատարված գաղանկութիւնների» մասին տարածված լուրերը նպատակաւոր աղաւաղումն է իսկապէս կատարված փաստի, այն է, որ կա-նձաւոր զորքերը եռանդուն կերպով ճնշեցին Սասունի հայերի դիւրողված ապստամբութիւնը, Բ. Դրանը բարոյական պարտաւորութիւն յանձն առաւ ապացուցանել Եւրոպային իր խօսքերի ճշգրտութիւնը: Վննիչ յանձնաժողովի անդամնե-րի ձեռքով կազմված հասարակ զեկուցումը դեռ համար բաւական չէր: Բոլոր կամ մի քանի մեծ պետութիւնների առանձին զեկուցումների ներ-կայութիւնը միայն այդ յանձնաժողովում կարող էր երաշխաւորել այդ զեկուցման ճշգրտութիւնը, պահպանելով յանձնաժողովի թիւրք անդամների

այն պրետիբը, որից անկասկած կը զրկվէին նրանք, եթէ որ նրանց քննութեան հետ միաժա-մանակ եւրոպական զեկուցումների ձեռքով ա-ռանձին քննութիւն կատարվէր: Ռուսաց, անգ-լիական և ֆրանսիական հիւպատոսների մաս-նակցութիւնը քննիչ յանձնաժողովում ամեն բան կարգի է գցում և ճնշեց այդ պատճառով դա կա-տարելապէս հաւանական է թվում մեզ:

Լոնդոնից մեր ստացած տեղեկութիւնները, սա-կայն, կատարելապէս չէին նախատեսում «Բէյ-» տերի գործակալութեան հաղորդած կամբինա-ցիան: Այդ տեղեկութիւններից երևում էր միայն, որ պետութիւնները ցանկանում են յանձնել քն-նութիւնը Ռուսաստանի և Անգլիայի միաբան գոր-ծող զեկուցումներին: Ֆրանսիայի մասին խօսք ան-գամ չը կար, որ հասկանալի էր, որովհետեւ անգ-լո-ռուսական «միջամտութեան» առաջարկութեան սկիզբը զրեցին, որքան յայտնի է, երեքշաբաթեան դաշնակցութեան պետութիւնները: Դեռ ևս չէ պարզված, թէ ինչից զրգոված քննիչ յանձնա-ժողովում նշանակվեցին ոչ միայն ռուսաց և անգլիական, այլ և ֆրանսիական հիւպատոս-ները: Շատ կարելի է, որ այդ բանի վրա պնդել է անգլիական միւնիստրութիւնը Ռուսաստանի ցանկութեան համեմատ և Գերմանիայի «Վերտը», որը սկզբից և եթէ չափազանց սառն վերաբերվեց հայկական գործերում եւրոպական միջամտութեան Լոնդոնի նախագիծին:

«Մենք կարծում ենք, սակայն, որ «Բէյութի» գործակալութիւնը չափաւոր է իր եղբայրացու-թիւնների մէջ, հաղորդելով, որ Բ. Դրան տուած համաձայնութիւնը «Թոյլ է տալիս նախագուշա-կել պետութիւնների նոր համախմբումն արեւելեան գործերի վերաբերմամբ»: Եթէ դա ակնարկ է ան-գլո-ֆրանս-ռուսական համաձայնութեան հնարա-ւորութեան վրա եւրոպական Արեւելքում, դա յա-մենայն զէպս շատ վաղաժամ եղբայրացութիւն է: Ռուսաստանը և Ֆրանսիան մի այդպիսի հա-մաձայնութիւն միայն այն ժամանակ կարող են կայացնել, երբ նրանց ձեռքում բաւարար ապացույցներ կը գտնվեն Անգլիայի անկեղ-ծութեան, որը մինչև այժմ այդպիսի զէպքերում հողում էր իր սեփական շահերի մասին, ի միաս նրա հետ համաձայնութիւն կայացրած պետու-թիւններին: Արեւելեան հարցի հողի վրա մանաւանդ դժուար է համաձայնեցնել Անգլիայի, Ռուսաս-տանի և Ֆրանսիայի շահերը, թէպէտ, ի հարկէ, անհնարին դեռ ևս ոչինչ չը կայ այդ փափուկ գործում:

«Новое Время»

խոնաւ, թաց գետնի վրա պառկած կանանց և մանուկներին:

Ուրեմն իր Նաղնիկին էլ այդպէս, գուցէ աւելի վատ դրութեան մէջ է, ու գիտէ դեռ, ապրում է, կարողացել է տեղ հասնել, կարողացել է դիմա-նայլ:

Որքան կուզենար նորից ծանապարհ ընկնել, վազել: Զգում էր, որ եթէ քիչ էլ չը շարժվի, այլ ևս կը թուլանայ, ոտները սառել էին: Պէտք էր թշուառների մասին էլ մտածել, պէտք էր շտա-պել կտրել լուսնից և ընկնել մի գիւղ, մի մի կտոր հաց, մի մի տաք անկիւն՝ ճարել նրանց համար:

Նա դարձաւ և գետին փռվածներին նայեց: Եթէ չը զարթնէին դրանք, եթէ մի քանիսն էր մեռած լինէին կամ սառած: Ինչ պէտք էր անել, թաղել: Ոչ, ժամանակ կորցնել չէր կարելի, պէտք էր քայլել:

Որքան անգութ բաներ էր մտածում, քունը և յօդածութիւնը չսկսեցին էլին նրան:

— Գայլերը... դուք նա բարձր ձայնով, ժամա-նակ է:

Շատերը վրա թռան, խմբապետը, որ զուխը կախած՝ ճիւղ յաղթվել էր, ընդոտն ելաւ և գո-ռաց:

— Այո, դէ՛, վերկացէ՛ք, ժամանակ է. դուք յայտնել մեղ տանջանք անցնել առանց տես-նելու:

— Գալներ, ասաց Պետոն, Աստուած ողորմած է:

Ոտքի ելան քնաթափաւ. ցրտից սրթարթում էին, ատամները կարկափում, կուշ գալիս: Վերց-րին ինչ որ ունէին: Շատերը չէին կարողանում շար-ժել իրանց անդամները, թացութիւնը կեանք չէր թո-ղել նրանց մէջ. մի քանիսը աղաչում էին, որ իրանց

ԴԱՐԱՉԻՉԱԳԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Դարաչիչագի գաւառաբաժինը առողջապահա-կան տեսակետից շատ լաւ է մնացել միւս հա-րան գաւառներից: Գիւղական ժողովուրդը ապ-րում է կեղտոտ դրութեան մէջ և գիւղերից շա-տերը այդ շրջանում աղբի և անմաքրութիւնների կոյտեր են պարունակում: Ոչ մի գիւղ, ոչ մի ըն-տանիք չունի իր առանձին արտաքնոցը, կամ իր ընդհանուր աղբանոցը: Արտաքնոցները անե-րի պատերի տակը, բազրեում, դռնապան չի-նութիւնների քունք ու պուճանները և նոյն իսկ փողոցներն են, որոնք տարվայ մի որոշ եղանա-կին սարսափելի դարչահոտութիւն են արտադ-րում և զանազան ցաւերի աղբիւր դառնում:

Մաքրութիւն պահպանելու անսովոր լինելով՝ գիւղական իւրաքանչիւր ընտանիք, եթէ մի փոքր բաց հրապարակ ունի իր տան դռան առաջ՝ ներ-սից ամեն օր դուրս է ածում իր գոմի հոտած «կուռը» (անասունների աղբը) և «բաւաւ» սեղ-մում, որը զարնան անձրեանից լճանալով՝ զար-չելի հոտ է բուրում...:

Բժշկական առողջապահական միւս պայմաննե-րը նոյնպէս բարձր թողի են արված այդ գաւա-ռակի բոլոր գիւղերում: Ոչինչ նշանակութիւն չը տալով բժշկական—սանիտարական խորհուրդնե-րին, գիւղական ամբոխը շարունակում է խմորված մնալ իր պապական, նախկին, կեղտոտ հակառող-ջական կենցաղավարութեան մէջ, անթիւ գոհեր տալով այս և այն վարակիչ հիւանդութեան:

Սանիտարական պայմանների բացակայութեան պատճառով Դարաչիչագի բաժնում տիրել են դա-նազան ժամանակներում զանազան տարափոփիկ հիւանդութիւններ, որոնք սակաւաթիւ գոհերով չեն բուսականացել:

Թուրք ազգայնականութիւնը այդ գաւառակում աւելի հակառողջական դրութեան մէջ է ապրում, քան թէ հայ տարրը: Գիւղական թուրք ամբոխը իր ամբողջ կեանքով, ապրուստի ներքին և արտա-քին կազմակերպութեամբ կեղտի և դարչահոտու-թեան բուն է ներկայացնում: Բժշկական խոր-հուրդներ, զեկուր, առողջապահութիւն, մաքրու-թիւն՝ թուրք ժողովուրդի համար անսովոր բաներ են: Նա իր հիւանդի վիճակը կամ յանձնում է կախարչներին՝ մասնադիտութեան կամ թէ թող-նում է Ալլահի կամքին: Իսկ բժշկականութեան մասին ոչինչ գաղափար չունի:

Առողջապահական գործում մալակ կան հասա-րակութիւնը նոյնպէս առաջ չէ գնացել միւս աղ-գութիւններից: Նա էլ սիրում է մնալ դարձեալ նոյն հակառողջական կեանքում, որի մէջ ապրել են իր նախորդները: Նրանց բազրեր, հրապարակները

թողնեն տեղն ու տեղը մեռնեն... Սկսվեց երե-ւանների սոսկալի բացը...

Մի քանի երիտասարդներ առաջ ընկան, կա-նայք ու աղջիկներ մէջտեղ մտան և ծանր, յու-ղարկաւորութեան պէս, խուսել սկսեց ցած իջ-նել: Քարշ էին գալիս, հազիւ ոտի վրա կանգ-նած՝ երեւում էին, յօրանջում էին, զանգատում մէջքի ու աղբիւրների ցաւից, կըսէին մի ընկեր-ներին, իսկ կանանց մէջքի վրա կպած մանուկ-ները, կարծես ձգված մի խոր փոսի մէջ, լնդում էին: Նրանցից մի քանիսն էր լուկ էին, կամ քը-նել էին կամ տառել. ու գիտէր, ու սիրտ ունէր կանչ առնել և ստուգել:

Իջնում էին ցած: Պետոն խմբապետի հետ ա-ռաջնորդում էր խմբին, իսկ մի երիտասարդ, որ հակոյն էր անշուշտ, անդադար առաջ ու ետ էր գնում և խրախուսում թուլացողներին, յօդադնե-րին:

Մի քանիսը փոքեցիկ նստել, ետ մնալ, բայց հսկող երիտասարդը ցնցում էր նրանց և գոչում.

— Գալէ...

Գալում էին, ետևից եկողները, որոնց մէջ կա-լին մի քանի ծերունիներ, լուռ ու մուռ, իրանց սպիտակ գլուխը գործէ երկար ցուպերի կոթնեց-րած՝ փոխում էին միօրինակ քայլեր, անդադար, առանց կանգ առնելու:

— Գայլերէ... կըլնում էր հսկողը—քանջ եղէք, ս. կարպաետ մըլի՛ք բո՞ւսաղ... հա, քիչ մնաց, մի՛ քնէք, դէ՛, Մկո՛, սկսէ հեծեալով, աղէկ լաւն մը պատմէ:

— Զոհնած եմ, ասաց պատմիչը խիստ մեղմ ձայնով—չեմ կարող...

— Ոչ, վնաս չունի, զօռ արա՛, խրախուսեց երիտասարդը—որ պատմես ինքը էլ կը մոռանաս:

ցելիս և տիրել ասպարէզ են կազմում, չը նայած որ իրանք արտաքին տեսքով և հագուստով շատ անելի մաքուր են երևում, քան թէ հայ, թուրք, քիւրդ և այլ ազգութիւնները:

Սանիտարական դրութեան բարւոյն գործը, մեր կարծիքով, պէտք է դնել գիւղական-հասարակութեան վարչութիւններին վրայ, որոնք մշտապէս պէտք է հսկեն հասարակական առողջապահութեան և մաքրութեան վրայ, ցոյց տալով նաև առաւել ժողովրդին առողջապահիկ ինտերի և սանիտարական դրութեան նորանոր պայմանները:

Ի դէպ, նախկին խօսեալայն բարում թէն այդ շրջանի մի քանի նշանաւոր գիւղերում կանոնաւոր հսկողութիւն էր կատարուում առողջապահական-մաքրութեան վերաբերմամբ և գիւղական սանիտարական խմբերը պատշաճաւոր կերպով գործում էին, սակայն այժմ այդ հանգամանքը բոլորովին անուշադիր է թողնւում և գիւղական սանիտարները մոռացել են իրանց պարտաւորութիւնը կատարել:

ՆԱՄԱԿ ԳՕՐԻՍԻՑ

Գեղեցիկների 3-ին

Շաբաթ օր, գեղեցիկների 3-ին, հայոց երկդասան դպրոցում, ուսուցիչների նախաձեռնութեամբ, թաղէտ և Բարթողիմէոս առաքելների յիշատակի առիթով, հանդէս կատարուեց: Վաղորդը յայտարարեց լինելով, հասարակութիւնը առաւօտեան 10 ժամին սկսեց հաւաքուել ուսումնարանի դահլիճը, որը չքեղ զարդարւած էր:

Հանդիսականները մէջ նկատելի էր հայ կանանց և օրիորդների ներկայութիւնը: Մինչև անդամ նկատելի էր տեղական տարազով մի կին: Դա ուրախարկ երեւոյթ է, որովհետև դեռ երէկ հայ կինը, հայ օրիորդը ամօթ էր համարում երևան գալ այդպիսի հանդէսներում, իսկ այսօր միանգամայն ոտքի տակ տալով նախապաշարմունքը, նա վստահաբար իր ամուսնու հետ միասին գնում է դպրոցական հանդէսներին ներկայ լինելու:

Նախ հոգեհանգիստ կատարուեց օրվայ տունի առիթով, ապա աշակերտներին և աշակերտուհիներին երգեցիկ խումբը, գեղեցիկութեամբ ձայնագրութեան ուսուցչի, երգեց եկեղեցական երգեր: Ուսումնարանի աւագ-ուսուցիչը այդ տունի առիթով մանրամասն խօսեց, բացատրելով ժողովականներին դրա նշանակութիւնը: Երգեցիկ խումբը երգեց և մի քանի հայկական երգեր և ապա աշակերտներին ու աշակերտուհիներին մի քանիսը կարդացին ոտանաւորներ: Այստեղ լուսութեան չնք կարող տալ ժողովականների կա-

տարեալ հիացումը. «Գիշերը Վաղնիս» երգեց մի աշակերտուհի աջող ձայնով. երգը այնքան դուրս եկան էր, որ նոյն իսկ Գօրիսի խօսանքից մի քանիսի քարացած զգացմունքների վրա էլ ազդեց: Կարգացած ոտանաւորներից և երգերից յետոյ աշակերտները վարձատրուելին բուռն ծափահարութիւններով և մի տիկին աշակերտուհիներին բաժանեց քաղցրեղեններ: Ժողովուրդը լաւ տպահարութեամբ տակ դուրս եկաւ դահլիճից: Յաւանքով այն է, որ ուսումնարանի դահլիճը փոքր լինելով, տեղ չը կար մարդկանց նստելու համար: Մեր հոգաբարձուները այդ բանը ի նկատի պէտք է ունենան, մանաւանդ որ բացի դահլիճի փոքրութիւնից, ուսումնարանը իր ամբողջ կազմութեամբ թէ մանկավարժական և թէ առողջապահական տեսակետից անյարմար չինութիւն է. լաւ կը լինէր, եթէ այժմանից մտածէին և հասարակական խնդիրներից մէկը դարձնէին ուսումնարանի չինութեան հարցը:

Թատերաւէյի երիտասարդների խումբը, դաւաճապեցին օգնականի միջոցով, խնդիրով դիմել է նահանգապետին, թոյլտուութիւն խնդրելով Գօրիսում ներկայացումներ տալու իրաւունք ձեռք բերելու: Յոյս ունենե՞ք որ կաջողվի:

Նշանակը մեզ մօտ կատարեալ զարմանային է: Վաղորդ է, որ ձիւնի երես չենք տեսնում:

Յ. Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Մեզ գրում են Տրապիզոնից, որ այնտեղ այս օրերս Ազգային վարժարանի մի քանի ուսուցիչներին բնակարանները խուզարկւեցին:

Միշտ մի և նոյն դանդաղ, միշտ մի և նոյն բողբոջ.— դանդաղ տղետ տիրացուների ձեռնադրութեան դէմ, բողբոջ տղետ քահանաների բաղմանայու դէմ: Սխալված չենք լինի, եթէ ասենք, որ այս տարի մի քանի տեղերում այնքան ծնունդ չէ եղել, որքան տղետ, անուս, անբարձրակիւն տիրացուների ձեռնադրութիւն: Նորից հարցնում ենք. ո՞ւմ համար են այդ տիրացուները ժողովրդի համար: Բայց ժողովուրդը դրանց չէ ուղում:

Մեզ հաստատ տեղեկութիւններ են հաղորդում, որ թիւրքաց սահմանապահ իշխանութիւնները անխափար արգելում են արտասահմանից թիւրքերի վերադարձող հայերին թիւրքիա մտնելու: Ինչպէս յայտնի է, թիւրքահայ մշակները, որոնք գտնուում են Կովկասում, շատ դժուարութեամբ են կարողանում վերադառնալ իրանց հայրենիքը, որովհետև ձոր դողում էր նրա առջև, ակունքներով երկաթ կը ծածկէր... իսկ հայրը ունէր չունէր այդ ունէր: Նրա կենսիկ պայմանն էր այդ: Ամեն գրկանք, ամեն նեղութիւն նա արժանաւորում էր, ամեն զորկանք նա կրում էր, իր Առաքելին ուսուցնում, նրան հագցնում, նրա համար մտածում, նրան էր երազում...:

Դողում էր պատմիչի ձայնը, քայլում էր նա, իսկ ակնարկը հեռուն, միտքիս մէջ, կարծես որոնում էր մի ինչ որ սիրելի բան, ժպտում էր սիրալիկ կերպով...

«...Այսպէս երջանիկ՝ շարունակեց ծերունին— էլ դարձ կամ ցաւ նրա համար չէր: Մեծանում էր օրը, կտրիճ էր դառնում, իսկ հայրը ծերանում, ոյժերը սպաւում: Ի՞նչ հոգ. որդի ունէր, որի կենսիկ պայմանով ապրում էր ինքը:

«Անցան տարիներ, երջանիկ տարիներ, եկաւ և ձմեռ, եկաւ գարուն էլ. ամառը հասաւ: Կտրիճ երիտասարդը կենսիկ էր ստանում, օրից օր աճում և ծերունուն երջանիկ անում: Նրա մի ուսումը, նրա մի ժպիտը թշուառ ծերունուն արեւ էր տալիս, բայց...»

Պատմիչը այստեղ կանգ առաւ, ցուպը գետնին կոխեց և ասաց շատ թոյլ ձայնով:

— Թոյլ տուէ՛ք քիչ շունչ առնեմ...

Կանգ առին բոլորը և լուռ մէջ էին: Ծերունին խոստանալով զրուցել մի վայրկեան, յետոյ դանդաղութեամբ բարձրացրեց, ախտը, խամքած աչքերով լսողներին նայեց և շարունակեց.

«Մէկ օր, մի սև օր... երբ հայրը իր տան առջև նստած, իր որդու մասին էր մտածում, երբ երկինքը պայծառ բացված, արևն էր փայլում, երբ ծաղիկները միացած, օդը հոտով էին լցնում և երբ ծիծառներն ու սղիսկները երգեք դալայ-

տն նրանց չեն թողնում: Այդ բառական չէ, նոյն իսկ Ամերիկայից վերադարձող հայերին թիւրքաց կառավարութիւնը արգելում է թիւրքիա մտնել: Մարդիկ օրինաւոր անցագրերով հաղարարու վերատես ճանապարհ են անցնում, ցանկանում են գնալ իրանց ծննդավայրը, որտեղ ունեն տուն, տեղ, ընտանիք, բայց թիւրք կառավարութիւնը արգելում է, և խեղճներ ստիպված են սահմանազրկից կրկին վերադառնալ Ամերիկա, Եւրոպա կամ Կովկաս:

Տարածելով «Մշակի» անցեալ և այս համարի հետ «Աղբիւր» ամսագրի և «Տարազ» շաբաթաթիւր յայտարարութիւնը, մենք պարտք ենք համարում մի քանի խօսք ասել այդ երկու հրատարակութիւնների առիթով: Թէ «Տարազը» և թէ «Աղբիւրը» ներկայ 1894 թիւին, ինչպէս մեզ հաղորդում են, այնքան քիչ բաժանորդներ ունեն, որ եթէ դա 1895 թիւին էլ այդպէս շարունակվի, նրանք չեն կարող գոյութիւն ունենալ: Իսկ այդ երկու հրատարակութիւնների գոյութիւնը շատ ցանկալի է, քանի որ մեր գրականութեան մէջ թէ մի մանկական ամսագրի և թէ մի պատկերազարդ շաբաթաթիւրի գոյութիւնը աւելի քան անհրաժեշտ է: Պէտք է խոստովանել, ճշմարիտ է, այդ օրգանների խմբագիր՝ Տիգրան Նազարեան մի քանի անգամ փորձեր արեց գրական գործին մի տեսակ առեւտրական գոյն տալ,— բայց մենք յոյս ունենք, որ անցեալ փորձից խրատված, ապագայում այդպիսի փորձեր այլ ևս չի անի: Սակայն դրա հետ միասին պէտք է խոստովանել, որ թէ «Աղբիւրը» և թէ «Տարազը» մեր գրականութեան մէջ ամենալաւ ուղղութեան համակրող են եղել, գրականութիւնը փողոց չեն դարձրել և չեն դիմել այն շանտաժային միջոցներին, որոնց դիմում են մեր լրագրութեան մի քանի օրդ սննդը: Ահա այդ պատճառով, մենք անկեղծօրէն ցանկանում ենք, որ հայոց հասարակութիւնը միջոց տալ թէ «Աղբիւրին» և թէ «Տարազին» պահպանելու իրանց գոյութիւնը: Հասարակութեան համակրութիւնը մի և նոյն ժամանակ բարոյական պարտք կը դնի այդ հանդէսներին խմբագրութեան վրա՝ երբեք չը չեղնել դեռականութեան ազնիւ ճանապարհից:

Եկող տարվայ սկզբում, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրիւնները, երկրագործութեան և պետական կառուածների միջնորդութիւնը ձեռք է դարձրել Երևանեան նահանգի մի նշանաւոր տարածութիւն ուսուցչու աշխատանքներին: Ինչպէս յայտնի է, Երևանեան նահանգում գտնուում են բաւարակ ընդարձակ պլանտացիաներ: Ուսուցչան

ծախսերին կը մասնակցեն և Մօսկվայի գործարանատէրերից մի քանիսը, որոնց պատկանում են բամբակի պլանտացիաները Երևանի նահանգում: Ուսուցչան կը սկսվի Չանգու գետից:

Լուր է պտտում, որ թոյլ է տրված երկաթուղիական ճիւղ կառուցանել թիֆլիսից մինչև Կախէթ: Ճանապարհը, մայրաքաղաքի լրագրիւնների խօսքով, կը կառուցանի Անդրկովկասեան երկաթուղու վարչութիւնը գանձարանի հաշուով: Այդ ճիւղի կառուցման համար որոշված է 2 միլիոն ռուբլի:

Մտադրութիւն կայ, 1897 թիւին Մօսկվայում միջազգային բժշկական կոնգրես կազմել:

Թիֆլիսեան Միջազգային Պօղոսեան նուիրեց «Մշակի» 1895 թիւի տարեկան մի օրինակ Սոնախի հայոց դպրոցին:

Մեզ հաղորդում են, որ Կարա-Մուրզա մտադիր է մօտ ժամանակներս թիֆլիսում մի կոնցրես տալ:

«Վաղիթը» չոգնաւոր խորտակման դործի զեննութիւնը քրէական կարգով արդէն աւարտվեց, իսկ քաղաքացիական պահանջները դեռ ևս կան: Վնասվածներից շատերը մտադրութիւն ունեն քաղաքացիական կարգով պահանջել իրանց վնասները ուսուցչ Չոգնեանային ընկերութիւնից: Օրինակ, տիկին Կոնստանտին, «Օ. Ա. Լ. ԽՈՏԿԵ» լրագրի խօսքով, պահանջում է իր օրդու կորստի համար մօտ 15 հազար ռուբլի:

Թիֆլիսի մեզ գրում են. «Վախ 10-ին գիշերը աւաղակները կողոպտեցին հայոց երկու եկեղեցիները՝ սուրբ Աստուածածնի և սուրբ Գեորգ եկեղեցիները: Առաջինից տարել են մօտ 100 ռուբլի, իսկ երկրորդից 8 ռուբլի. եկեղեցական առօթներին ձեռք չեն տուել: Չարագործները դեռ չեն գտնված»:

Յիւրի Ա. Ա. ի հայոց դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեղ տալ երեսնաւոր. «Յիւրի Ա. Ա. եկեղեցական-ծխական դպրոցի հոգաբարձութիւնը չնորհակալութիւն է յայտնում թիֆլիսեցի վաճառական Ստեփան Թումանեանին, որ 15 ռուբլի նուիրեց մեր դպրոցին մի պահարան գնելու, որպէս զի դպրոցապատկան դրքերը և ձեռագործները անկորուստ պահվեալ: Պահարանը արդէն գնված է»:

Կանգնել էր նա ձիւնի մէջ, ձեռքերը պարզել: Ասաց, մի օպէս լռեց, յետոյ նստեց տեղն ու տեղ. ցուպը կողքին ընկաւ: Ոչ ոք չը շարժվեց տեղից:

«Մեռել էր, շարունակեց նա խիստ մեղմ ձայնով.— իր օրդին էր, սպանել էին... էլ ինչու ապրել ուրիշն. ինչու Մտառ ծերունին իր խրճիթը, դուրսը դրեց հանված օջախի վրա և այսպէս...»

Ծերունի ձայնը կտրուում էր. բոլորը կուցան դէպի նա: Ծրվածները դեռ շարժվում էին և մի անտելի աղիտքով շշուկ էր, որ լսվում էր.

Լէ լէ բալաս, լէ լէ ձագուկ, լէ, լէ...

Յետոյ մի ցնցում... և ամեն ինչ վերջացել էր: Ընկաւ կողքի վրա, դուրսը թէ մէջ առաւ և շունչը վիշտ...

Տիգրան մի խոր լուրջութեամբ Աղօթարանի լոյսը մեռելային լուսով լուսաւորում էր տեսարանը, քամին սաստկացել էր:

Հնաց այդ միջոցին էր, որ մայրերից մէկը, զգալով միջոց վրա մի սառնութիւն, դարձաւ ու շօշափեց կապած մանուկին:

— Աղջիկ, դրեց նա կողքի կնոջ, և շշուկաց— Սերգան էլ չէ շարժվում:

Միւս կինը մօտ դնաց, շօշափեց մանուկին, բարձրացրեց նրա գլուխը, յետոյ ստիպումով բաց թողեց և մոռացաւ:

— Քնել է:

Մանուկը սառել էր: Նա մեռած էր:

Իսկ քամին անդադար վիշտ էր. լսվում էին հեռաւոր բուերի ողբերկն ձայններ: Աղօթարանի լոյսը մեծանում էր:

(Կը շարունակվի)

մի լաւ բան պատմիր, որ տղերքը չը քնեն:

— Հա, պատմիր, Մկո, ասացին ամեն կողմից— մի լաւ բան պատմիր, որ չը քնենք:

Ծերունի պատմիչը չէր պատասխանում. այնքան յօգնել էր, որ պնդելու իսկ սիրտ չունէր. մնում էր դիմանալ: Երկու ժայլ փոխեց, երկու ծանր քայլեր և ասաց.

— Թողնա՛ծ եմ... բայց կը պատմեմ:

— Մկոն հեքեքեք է պատմում, լսեցէք, դուռաց հսկողը առաջին գնացողներին:

Քայլերը մեղմացան, յետոյ առաջ գնացողները ետ մնացին. մի շրջան կաղվովեց պատմիչի շուրջը: Ծրվանից դուրս մնացին միայն կանաչ, իսկ առջևից՝ Պնաօն և խմբագրու:

— Լսեցէ՛ք... դուք նա մի մեծ ճիւղ գործելով— ծերունի Մկոն, Մշոյ պատմիչի վերջին պատմութիւնը լսեցէ՛ք... շատ չի անցնի, մի Մկոն չի պատմի, էլ նրա պատմութիւնը ձեռք չի դուրսնացնի... կը լռի Մկոն... լսէ՛ք նրա վերջին պատմածը:

«Եւ լինի չի լինի մի մարդ, մի խեղճ մարդ, որ ոչ օրընէն էր գրկել, ոչ մանուկի լացացրել և ոչ էլ ընկերին օգնութիւն մերժել:

«Լաւ մարդ էր թէ չէ, այդ Աստուած գիտէ, բայց աղքատը նրա դռնից դատարկ ձեռքով ետ չէր դարձել, այլին նրան չէր մեղադրել, թշուառներին նա չէր զրկել և ոչ էլ տուկոսով մարդ լսել տել... Ապրում էր նա ոչ վատ. մեռել էր կինը, մեռել աղջիկը. բոլորից միայն մի հատ օրդի էր մնացել: Վեցն էր թաղել, թաղելով ծերացել: Կենա՛ք մի փոքրիկ կաթիլ օւնէր, նա էլ իր միակ օրդու համար էր պահել... Ունէր չունէր, այդ մի հատիկ օրդին ունէր:

«Որդին...»—20 տարեկան մի ջիւան-կտրիճ, սիրուն ու թռուռ, բոցով ու թուխ-թուխ: Սար ու

ՍՂԱՍԽԻՑ մեզ գրում են. «Կիրակի օր, ղեկ-տեմբերի 4-ին, քաղաքային ուսումնարանի բա-կում կայացավ ժողով, որը պետք է վճռեր Սըշ-նախում բացվելից Մարիաման օրիորդաց պրոգի-նադիայի հարցը: Նախ դառառապետը մի քանի խօսքով բացատրեց իրական սեռի ուսման կա-րևորությունը, յետոյ դիմելով ժողովին ասեց. «Պրոգիմնագիտյայ բացվելու համար տարեկան հար-կան է 4000 ռուբլուց ոչ ավելի, որից 1500 ռուբլի խոստանում է տալ կողմանան ուսում-նարանական շրջանի հոգաբարձուն, 1500 ռուբլի ենթադրում է ստանալ թղթակաղարմից, մնում է 1000 ռուբլի, որը պետք է տալ քաղաքային կառավարիչ: Ժողովը աչքի առաջ ունենալով քա-ղաքի նիթական քաղաքական դրությունը, երկար վիճաբանությունից յետոյ վճռեց մի այնպիսի աղբյուր գտնել, որից քաղաքը կարողանայ ձեռք բերել 1000 ռուբլի: Գրանցում փակվեց ժողովը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, դեկտեմբերի 2-ին
Այստեղի բոլոր լրագրիները անխոր գրադ-վում են հայոց խնդրով:
Գլխավորապես նիթ են մատակարարում այդ մասին «Wossische Zeitung» և «Lokal-Anzeiger» լրագրիները: Առաջինը ամեն օր մի կամ եր-կու յոդուած է տպում և հեռագրիներ, կամ քա-ղաքական լուրեր: «Wossische Zeitung»-ը համա-րում է հայկական խնդիրը օրվայ քաղաքական խնդիր և խորհուրդ է տալիս իր կողմից թիւ-րքաց կառավարությունների րէֆորմներ մտցնել թիւ-րքաց-Հայաստանում նոյն իսկ թիւրքաց շահերի տեսակէտից:

Լրագրի վերջին համարում յայտնված է, որ արդէն նշանակվել են Անդրլայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից ներկայացուցիչներ՝ Բրնդու-րոն, անկախ քննություն կատարելու համար:

Այստեղ այն կարծիքն է տիրում, որ խնդիրը լուրջ կերպարանք է ստացել և որ նա պէտք է զիջումատրական բաւարար լուծում ստանայ:

Գերմանիան ինքը իրան զգուշ է պահում այս խնդրում, վերապահելով աղբյուրի գործողություն-ները Ռուսաստանին և Անդրլային:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Գերմանական դեսպանությունը, Պարիզի լրա-գիրներին խօսքերով, մասնակցել է Ֆրանսիական պատգամաւորների ժողովի նախագահ Բիւրդոի թաղմանը:

— «Հավասի» գործակալությունը հաղորդում է, որ ֆրանսիական պատգամաւորների ժողովի նա-խագահ, հանգուցեալ Բիւրդոի տեղ, ընտրվել է արմատական Բիւրսոն:

— «Daily News» լրագրի Բերլինի թղթակիցը գրում է. «Բերլինի պաղտնի օտարկանությունը կըրկ-նապատակել է իր հակողությունը նոր լէյխտա-գում տեղի ունեցած փոթորկալի դէպքից յետոյ: Որ չէ անցնում, որ մի քանի մարդիկ չը կալա-նաւորվեն մեծությունը վերաւորելու համար: Այդ առիթով սօցիալիստական «Wörrwats» լրագիրը զգուշացնում է իր համակուսներին քաղաքական խօսակցություններ չը սկսել անձանթ կամ քիչ ծանօթ մարդկանց հետ»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍՏԱՑԻՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 դեկտեմբերի: Երէկ Նոյա կայսերական Մեծութիւնները գնացին Յարսկոե-Սկել:

ՅՕԿՕՀԱՄԱ, 12 դեկտեմբերի: Կայսրի զօրա-բաժնի, դեկտեմբերի 7-ին, խաչկնդի մօտ, հան-դիպեց թուր 10,000 չինական զորքին, Լուսնի հրամանատարութեան տակ 5 ժամ տևող կռիւից յետոյ, չինացիները փախուստ տուին: Կորուստ-ները յայտնի չեն:

Կ. ՊՈԼԻՍ, 12 դեկտեմբերի: Բ. Դուռը հաս-տատեց օտար պետութիւնների առաջարկած հրա-հանգները թիւրքաց Հայաստանում տեղի ունե-ցած անցքերը ընկելու համար կազմված յանձնա-

ժողովի օտար անդամների համար: Այդ յանձնա-ժողովի թիւրք անդամները հասն էրբրում և սպասում են օտարազգի դեկտեմբերի գալուստ:

ԲԵՐԼԻՆ, 12 դեկտեմբերի: Ելրան ամերից զօրս եկաւ և հեղեղեց Համբուրգում շատ թա-ղեր, ներքնատներ ապրանքներով: Այսօրի ստո-րին մասերը նոյնպէս վնասվեցին հեղեղից: Վնաս-ները մի քանի հարիւր հազար մարկ են հաշուում:

ԼՕՆԴՈՆ, 12 դեկտեմբերի: Սատիկ փոթորիկը մեծ թշուառութիւններ պատճառեց Անգլիային, շատերը սպանված և վիրաւորված են տների և ծինելոյքների քանդվելու ժամանակ. մարդիկ սպանվեցին նաւերի խորտակման ժամանակ ծո-վափերի վրա. փոթորիկի պատճառով լէյսներից իջաւ Մանչեստրից Լոնդոն ուղարկված մարդա-տար գնացքը և ընդհարվեց ապրանքատար գնացքի վագոնին. մարդատար գնացքի վագոննե-րի մի մասը ջարդ ու փչուր է եղած, որի ժամա-նակ 12 ճանապարհորդներ սպանվեցին և 52 հո-գի վիրաւորվեցին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 դեկտեմբերի: Թագաւոր Կայսրը ամենաողորմած կերպով ընդունեց Միքայէլեան ար-տիւրիական ակադէմիայի պատաւաւոր նախագա-հի կոլոմբ, ղեկավար Մեծ Իշխան Միխայիլ Նի-կոլաեւիչի վրա վերոյիշեալ ակադէմիայի պատաւ-աւոր փոխ-նախագահի կոլոմբը:

Բարձրագոյն հրոսակաւոր, Կայսր Ալէքսանդր III-ի արձանի կառուցման համար նախատու-թիւններ ժողովելու նպատակով, Մոսկովայի դեկե-րալ-նախնագահատի նախագահութեանը կազմվում է մի առանձին մասնաժողով, որի անդամները կը լինեն Մոսկովայի նախնագահատի անդակաւորութեան պարագլուխը, Մոսկովայի քաղաքագլուխը և առան-ձին Բարձրագոյն հրամանով նշանակված երկու անդամներ:

ՊԱՐԻՑ, 13 դեկտեմբերի: Մերսի առաջարկեց պատգամաւորների ժողովին մի օրինադի դաւա-ճանութեան մասին, որը ուղարկվեց գիւնդրական մասնաժողովին: Ժօրէս մտցրեց մի առաջարկու-թիւն, որով պահանջում է վերացնել մասկան պա-տիժը գիւնդրական օրէնսդրութեան մէջ: Պատգա-մաւորների ժողովը քուէարկում է Մերսիի նա-խագծի անյետաձգելի լինելը: Վիճաբանութիւն-ների ժամանակ, պատգամաւորների ժողովում մի աղմկալի տեսարան տեղի ունեցաւ: Ժօրէսի և Բարտու միութարի մէջ, Նախագահ առաջարկում է ժամանակաւորապէս հրաժարեցնել Ժօրէսին: Այդ առաջարկութիւնը ընդունվում է ձայների աւելին մեծամասնութեամբ և Ժօրէս դուրս է գալիս նիստի դահլիճից: Ետագիտելի աղմուկի մի-ջոցին, որ բարձրացրեց ծայրայեղ ձախակողմը: Նիստը ընդհատվեց: Ժօրէս սեկուդաւորներ ու-ղարկեց Բարտուի մօտ: Միւսամարտը տեղի կու-նենայ վաղը: Սենատում Դանրապետական Մօրելէ մի առաջարկութիւն մտցրեց, որով պահանջում է դաւաճանութիւնը քաղաքական յանցանք չը ճա-նաչել:

ԼՕՆԴՈՆ, 13 դեկտեմբերի: Այս շաբաթվայ ըն-թացքում խիբոշիւում նաւերը կը նստեն 25,000 հոգի:

Կօրէյի կառավարութիւնը համաձայնեց բանալ միջազգային առևտրի համար էլի երկու նաւա-հանգիստներ՝ Մօկպօ՝ խոլաղօի մօտ և Խուսամ-պօ՝ Տաուտեց գետի վրա:

Հիւսիսային Մանչուրիայի մասնաւորականների մէջ ապստամբութիւն ծագեց:

ՏՕԿԻՕ, 13 դեկտեմբերի: Պարլամենտը բացվեց զահական ճառով, որի մէջ, մասնաւորապէս անելով յաղթութիւնների վրա, յայտարարվում է, որ եւ-պօստացիները չարունակում են յարձակողական ար-շաւանքը թշնամու երկրի վրա, չը նայելով ցրտին և զրկանքներին. որ կապիտալի յարաբերութիւն-ները չէզոք պետութիւնների հետ աւելի քան երբ և ից քարենամական են և որ զահագրիների վե-րաքննութիւնը մի քանի պետութիւնների հետ ար-դէն աւարտված է, իսկ միւսների հետ գործը ա-ռաջ է դնում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 դեկտեմբերի: Գերմանիայի ուսուցիչ դեսպան գնեւրալ-աղիտանտ կոմս Դուվալով ղեկավարված է վարչակալի գնեւրալ-նահաւգւպետ և վարչաւայի շրջանի զօրքերի հրամանատար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Դեկտեմբերի 13-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ	92 ր. 75 կ.
Բերլինի վրա 100 մարկ	45 ր. 37
Պարիզի վրա 100 ֆրանկ	36 > 82
Ոսկի	արծէ . 7 > 41
Մարալայի կուպոններ	148 > —
Արծաթ	— > —
Բորսային դիվիդենտ	5 > 70/0
Պետ. քանիք 50/0 տօն 1 շրջանի	— > —
— — — — — 2-րդ	— > —
— — — — — 3-րդ	— > —
40/0 պետական ընկուտ	95 > 25
50/0 ոսկեայ ընկուտ 1884 թ.	161 > —
41/2 ոսկեայ փոխառութիւն	— > —
Արեւելեան 50/0 փոխառ. 1-ին շրջ.	— > —
— — — — — 2-րդ	— > —
— — — — — 3-րդ	— > —
— — — — — 4-րդ	— > —
Ներքին 50/0 առաջին փոխառութ.	243 > 75
— — — — — երկրորդ	223 > 50
Պետական երկաթուղային ընկուտ	101 > 75
41/2 ընկուտ	— > —

40/0 ներքին փոխառութեան 957/8 > — >
50/0 գրաւ. թղթ. արն. կալ. քանիք > — >
Ազն. կալ. Պետ. քանիք խաղաղութ. > — >

Գրաւ. թղթ. 193 > 50 >
41/2 0/0 վկայակ. զիւղ. հող. քանիք. 101 > — >
41/2 0/0 գրաւական թղթեր կալուած. > — >
Փոխ. կրեդիտ. քանիք. մնտալ. 151 > — >
— — — — — թղթաւ. > — >

Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. 1011/8 > — >
Ենկերութեան օրվաղախաներ. 100 > 75 >
Մոսկովայի քաղաք. օրվաղախաներ. 100 > 75 >
Օղէտայի 1001/8 > — >
Թիֆլիսի > — >
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. քանիք. 99 > — >
— — — — — Գուլիայի 99 > 50 >

Ս. Պետերբուրգի բօրսայի արամադրութիւնը ամուր է:

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է


ՄԵՂՐԻՍ. Մ. Շ. Չեր հերբուր չի տպագրվի: Չարժէ ուղարկութիւն դարձնել:

ԲԱԳՈՒՄ. Ա. Աւարեան. Չեք կարող ուղարկել «Մշակի» համարները: Գաւառական քաղաքները, հատով վաճառվելու համար, մենք ոչ ոքին և ոչ մի տեղ չենք ուղարկում:

ԱՄԽԱՐԱԿ. Թ. Գ. Չեր յօդուածը լոյս չէ կա-րող տեսնել:

ԲԱԹՈՒՄ. Մ. Խաչատրեան. Չեր ուղարկած հասցեով «Մշակ» կուղարկվի Համբուրգ, դեկտեմ-բերի 1-ից և ամբողջ 1895 թ. ևս կան: «Մշակի» տարեկան վրին արտասահմանումն էլ նոյն է, ինչ որ Ռուսաստան, այն է 10 ռուբլի: Ուրեմն այդ հաշուով էլ բարենաճեցէք ուղարկել խմա-գրութեան բաժանորդները:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻԻՔ-ԱՂԱՍՄԱԼԵԱՆ



ՀԵՌԱՒՈՍ Ն 104

Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

որը, բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թ.ին ՈՍԿԷ ՄԵԴԱԼԻ—ԱՆՏՈՎԵՐԱԿԵՆԻ, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻԱՌՈՐ ՊԱՐԳԵՆԵՐԻ—ԼԻՕՆԻ ցու-ցահանգէներում

Առաջարկում է նոր պատրաստած

ԸՆՏՐՈՒ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ

«Капризъ»	25 հատը 15 կօպ.
«Рекомендаціонная»	— > —
«Театральная»	10 հատը 5 կօպ.
«Флора»	— > —
«Экономная»	10 հատը 3 կօպ.

Կարելի է առնել զօրծարանից և իսկական ծիւխոտաւաճառների մօտ: Ուղարկելու ծախսը զօրծարանի վրա է:

(№ 104) 0—29

Աղղիս վեհափառ Հայրապետը հրամայել է զօրծարել Հայկական դպրոցներում, որպէս ձեռնարկ Սարգիս քահանայ Բեգնազարեանից աշխատասիրած

ՀԱՄԱՌՈՏ ԳՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱ-ԳԻՐԳԸ:

Յայտնելով այս ի գիտութիւն դպրոցական վարչութեանց՝ խնդրում ենք ցանկացողներին առ այժմ զիմե ուղղակի այս հասցեով, Թիֆլիս, Երզնէական փողոց, տուն № 45, աշխատասիրողի այրին:

Դիքը կազմած է և արժէ 1) հատով գնողներին 60 կ., 2) տասնից մինչև յի-նուն գնողներին 55 կ., 3) յիսունից մինչև հարիւր գնողին 50 կ., 4) դպրոցական վարչութիւնից վկայված չքաւոր աշակերտներն ու աշակերտուհիները կարող են վճա-րել 40 կ.: ձանապարհաճախը գնողների վրա է:

(№ 81)

3—5

Նոյեմբերի 20-ից ստացվել է Պատտօրի սխտեմով պատրաստած ԲՐՈՒՍԱՅԻ ԲՕԺՈ-ԺԻ ՍՊԵՏԱԿԻ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ, որ արդէն անցեալ տարիներից յայտնի է կողմասուռ և Պարսկաստանում իր յատկութիւններով և տուած առատ բերքով:

Սերմը ստացված է ուղղակի յայտնի «Էկոնոմիսես» Ֆիրմայից: Գնել ցանկացողները կարող են զիմե՝ ԲԱԹՈՒՄ, ԹԻՖԼԻՑ, ԲԱԳՈՒՄ, Եղբ. Մնացական-նեաններին, իսկ ՆՈՒԻԻ՝ Աղայ Մուսայ Մահմեդովին:

Աս հասցեով, Բր. Мнацаканянцъ, Батумъ կամ Тифлисъ կամ Бат. (№ 136) (չ. Ե.)

5—25